ՏԵՂԵԿԱԳԻՐ ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼԻ
ИЗВЕСТИЯ АРМЯНСКОГО ФИЛИАЛА АКАДЕМИИ НАУК СССР
№ 2, 1943

Հ. Ջանփոլադյան

ԽՈՍՐՈՎ-ՇՈՒՄԸ ՄԱՆՎԵԼԻ ՈՐԴԻ ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆ Է

Մեր ժամանակներս լույս տեսած «Սմբատ Խոսրով-Շում Բագրատունի» բրոշյուրում, հակառակ [illegible] այն կարծիքի, որ 6-րդ դարի վերջին և 7-րդ դարի սկզբին ապրել են երկու տարբեր Սմբատներ, և այս երկուսին ներկայացրել եմ որպես մեկ անձնավորություն: Հաշվի առնելով բրոշյուրի բնույթը, պատճառաբանությունները անգամ տալ հնարավոր չէր, ուստի ավելի հարմար գտանք հանգել դալ այդ տեսակետը հիմնավորող առանձին հոդվածով:

6—7-րդ դարերի պատմության համար ամենահավաստի աղբյուրը Սեբեոսի Պատմությունն է, որը և հիմք է հանդիսացել անվանի գրողների [illegible] շարադրման համար: Նույն այդ ժամանակի փաստերի և Սմբատ Բագրատունու անձնավորության մասին տեղեկություններ ունեն նաև ժամանակով ուշ հեղինակները, որոնք երբեմն շատ [illegible], [illegible] ժամանակագրական կարգով են նկարագրում անցյալ դեպքերը: Սրանց բոլորի սկզբնաղբյուրը Սեբեոսն է, երբեմն կրճատված և խմբագրված իրենց ճաշակի ու նպատակի համաձայն: Պատմիչների այդ կամայականությունը հասցրել [illegible] է գործել Սմբատ Բագրատունու կյանքի բովանդակ ժամանակաշրջանը: Պատմական փաստերի այս շփոթությունն է հավանորեն [illegible] պատճառներից մեկն այն կարծիքի, որ Բյուզանդական Հայաստանում գործող Սմբատ Բագրատունին տարբերվում է Պարսկաստանում գործող Սմբատ Բագրատունուց, թեև նրանք ժամանակով, ընդունակություններով և անգամ արտաքին տեսքով իրար շատ նման են:

Քննենք այդ կարծիքներն ու փաստերը:

Սեբեոսի Պատմության առաջին ռուսերեն հրատարակությունը կատարել է Ք. Պատկանյանը 1862 թվին: Հրատարակությանը կցված են հարուստ ծանոթագրություններ: 137-րդ ծանոթագրության մեջ, որ վերաբերում է տեքստի այն մասին, որտեղ Մորիկ կայսեր նոր զորահավաքի կապակցությամբ առաջին անգամ հիշատակվում է Սմբատ Բագրատունու անունը, ասված է.

«Сен-Мартен ошибается, смешивая этого Смбата с известным Смбатом—марзпаном Гиркании. Они были действительно родственниками и современниками, но первый из них по своим владениям находился под властью греков, а второй был любимцем Хосрова II и постоянно находился у него на службе».

Ինչպես տեսնում ենք, Պատկանյանի հիմնական պատճառաբանությունն այն է, որ առաջին Մմբատի կալվածները պանվում էին բյուզանդական իշխանության տիրապետության տակ, իսկ երկրորդինը՝ պարսկական։ Տեսնենք՝ ինչ է ասում պատմությունը։

Բագրատունիների հայրենի կալվածներից էր Կողովիտ գավառը։

Մինչև 591 թվականը Կողովիտ գավառը գտնվում էր պարսկական տիրապետության տակ, ուստի պարսկական արքայի հպատակներ էին համարվում և Բագրատունի իշխանները։ Մորիկ կայսեր և Խոսրով արքայի 591 թվականի պայմանագրի համաձայն, Պարսկաստանից Բյուզանդիային անցնող նոր շրջանների մեջ էր նաև Կողովիտը։ Այս սահմանը պահպանվում է մինչև 603 թվականի պարսկա-բյուզանդական նոր պատերազմը։ Այսպիսով, 591—603 թ. թ. ժամանակաշրջանում Բագրատունիների տունը և Մմբատ անձանի գորավարը գտնվում էին բյուզանդական գերիշխանության տակ։

Ինչպես ժամանակակիցներն են պատմում, քաղդր չէր Հայաստանի վիճակը հայոց թրիստոնյա կայսեր տիրապետության տակ։ Հայկական ռազմական ուժը ոչնչացնելու նպատակով կառուցված հանգիստի գրաֆիտները ժողովրդի մեջ մեծ դժգոհություն էին առաջացնում, որը շատ հաճախ վեր էր ածվում զինված ապստամբության։ Ամեն անգամ նման երևույթները ճնշվում էին պատժիչ արշավախմբերի միջոցով, որոնք գաժան հաշվեհարդար տեսնելով ժողովրդի հետ, մեկուսացնում և ոչնչացնում էին գեկավարներին։ Կայսերական պայրույթից խուսափող ապստամբները ապաստան էին գտնում Պարսկաստանում։ Պարսկական Խոսրով Բ արքային շատ լավ ծանոթ էր Մորիկի քաղաքականության նպատակը։ Վերջինս Խոսրովին գրած իր հաղորդագրությունում խորհուրդ էր տալիս ոչնչացնել հայերին, իրենց մեջ եղած այդ անհնազանդ ռազմական ուժը։ Սակայն Խոսրովը լավ գիտակցելով հայերի մեծ գերը պարսկա-բյուզանդական գարավոր պայքարի ընթացքում, փարում էր այլ քաղաքականություն՝ սիրաշահում, հովանավորում էր Բյուզանդիայից զժգոհ իշխաններին և այսպիսով ամուր հենարան էր նախապատրաստում հետագա անխուսափելի նոր պատերազմի համար։

595 թվին Բյուզանդական Հայաստանում բռնկում է մի նոր ապստամբություն, որի գլխավորն էր Մմբատ Բագրատունին։ Ապստամբությունը ճնշվում է. պարապլուխները գերվում են, բյուզանդական ծերակույտը պատպարտում է նրանց մահվան և նշանավոր կրկեսային ներկայացումից հետո (որին ժամանակակիցներն առասպելական երանգ են տվել) աքսորում են բյուզանդական պրովինցիաները։ Մմբատ Բագրատունուն սրիրուների պաշտոնով ուղարկում են Աֆրիկա։ Հետևելով հայ մյուս իշխանների օրինակին, կայսրահպատակ Բագրատունին փախչում է աքսորից և հասարակում պարսկական արքունիքում, դառնում է Խոսրով Բ-ի սիրելի գորավարը։ Իր հետագա գործունեությամբ նա սեր է վայելում նաև իր հայրենակիցների կողմից, որոնք այդ մասին արձանագրում են իրենց ժամանակագրություններում, աչքառելով բաց թողնել այն, ինչ կարող էր նսեմացնել կամ արատավորել կորովի գորավարի պայծառ դեմքը։ 618 թվին, նրա մահից հետո, դրա տեղափոխվում է Հայաստան Բագրատունիների տոհմական գերեզմանոցը՝ Կողովիտ գավառի Դարույնք ավանը,

որը 603—604 թ. թ. պարսկա-բյուզանդական պատերազմից հետո նորից պարսկական տիրապետությանն էր անցել:

Այսպիսով, Պատկանյանի հիմնական պատճառաբանությունը երկու տարբեր Սմբատների մասին վերանում է:

Սեբեոսի Պատմության ռուսերեն երկրորդ հրատարակությունը լույս է տեսել 1939 թ., Երևանում, Ստ. Մալխասյանի թարգմանությամբ: Սմբատ Բագրատունուն Վրկանի մարզպան նշանակելու մասին թարգմանիչը ծանոթագրում է (էջ 54, ծան. 105).

«Этот Смбат Багратуни не тот, который был ввергнут в Константинополе в кинигий и затем сослан в Африку, а другой одноименный князь на службе у персов. В отличие от первого армянские историки называют его *Բազմահաղթ*—Многопобедный, Победоносный. Себеос постоянно его называет почетным титулом Хосров-Шум».

Այս կարծիքին հակառակ, երկու Սմբատներին որպես միևնույն անձնավորություն են ընդունում Սեն-Մարտենը[1], Ալիշանը[2], Օրմանյանը[3] և Մարքվարտը[4]: Թե՛ մեկ և թե՛ մյուս եզրակացությունը կատարված է պատմական աղբյուրների հիման վրա. դիմենք այդ աղբյուրներին:

Բացի ժամանակակից Սեբեոսից, Սմբատ Բագրատունու մասին հիշատակություններ ունեն նաև 10-րդ դարի հեղինակներ Ասողիկը, Ուխտանեսը, Հովհ. Դրասխանակերտցին, 12-րդ դարի՝ Սամուել Անեցի, Մխիթար Անեցի, 13-րդ դարի՝ Վարդան Բարձրբերդցի, Մխիթար Այրիվանեցի, ինչպես և Յայսմավուրքը:

Ասողիկ[5].— Աբրահամ կաթողիկոսի օծման կապակցությամբ նա հիշատակում է Սմբատ Բագրատունուն, անվանելով նրան Հայաստանի Վրկանի մարզպան, ապա նկարագրում է, թե ինչպես Վրկանում Սմբատը հանդիպելով մայրենի լեզուն և գիրը մոռացած հայրենակիցներին, բաց է անում նրանց համար դպրոցներ և կարգում է եկեղեցական առաջնորդ:

Ուխտանես[7].— Իր «Հայոց պատմության» մեջ վրացական Կյուրիոն եպիսկոպոսին գրված մի քանի նամակներում, Վրկանի մարզպան Սմբատի անունը հիշատակելուց հետո, մի հատուկ գլուխ է նվիրում նրան «Յաղագս Սմբատայ Վրկան Մարզպանի թէ յորմէ ազգէ և յորում ժամանակի եղև մարզպան» վերնագրով: Նա բազմաթիվ գովասանքներ է շռայլում այդ «առաքինի և հզոր» մարդու նկատմամբ:

---

1 M. V. Saint-Martin, Memoires... sur l'Armenie, 332—333.

2 Ալիշան, Հայապատում, էջ 216—218. Շիրակ, էջ 96, 97.

3 Օրմանյան, Ազգապատում, էջ 585.

4 Մարկվարտ, Վրկան Բագրատունյաց ծագումը («Հանդէս Ամսօրեայ», 1912, էջ 336).

5 Ստեփանոս Տարոնեցի (Ասողիկ), Պատմութիւն, ՍՊԲ, 1885, էջ 85—86.

6 Այդ մասին տե՛ս И. Орбели, Гагаранская надпись 639 г. („Христианский Восток", т. II, вып. III, էջ 135).

7 Ուխտանես, Պատմութիւն Հայոց, գլուխ Է".

Հովհ. Դրասխանակերտցի[1].— Սա նախորդներից ավելի բնագրական է գրում Մեծրոպ Իշխանուհու մասին։ Մեծ գովասանքներով նկարագրում է նրա բարությունը Հայքմանակները Պարսկաստանում, ապա փառաբանում է Հայաստան եկեղեցու համար նրա կատարածները։

Սամուել Անեցի[2].— Իր «Հաւաքումն ի գրոց պատմագրաց» գրքում բավական անցողակի հիշատակում է Մեծրոպ Իշխանուհուն, խիստ չափաբեր ժամանակը, բայց պահելով գեղջերի հաչորդականությունը։ «...ոչ ոչ զՄեծրոպ չարաբասեալ ոչ Ճարտուհ Մասրոպ և նա թողեալ ի վերայ նորայ գպատանս...»։ Ն.Մ. թ. Մեծրոպ Իշխանուհին նշանակվում է Վրկանի մարզպան, որտեղ և հանդիպում է գերված հայերին։

Մխիթար Անեցի[3].— Իր Պատմության «Վասն Մեծրոպ քաջին գրոյցը» գլխում մյուսներից ավելի մանրամասն գրում է Պարսկաստանում Մեծրոպ Իշխանուհու տարած հոգեմանակների մասին։ Նկարագրում է նրա գործունեությունը Վրկանում, Հայաստանում, չափազանց ժամանակը. ապա հիշում է Վահրամ Զորինի ապստամբության մասին և հենց այստեղ գրում է, որ Մեծրոպին չարաբասեցին արքայի առաջ և վերջինս դատապարտեց նրան գպանների հետ մենամարտի, որից ազատեց ու աքսորեց Աֆրիկա, արիրուն նշանակելով։ (Այստեղ չափազանցությունն ավելի ակնհայտ է. չի հիշատակված, թե ով է կայացրել դատավճիռը՝ բյուզանդական կա՞յսրը, թե՞ պարսից արքան։ Ըստ Մխիթարի, դուրս է գալիս՝ Պարսից արքան, որը, սակայն, Աֆրիկա աքսորել չէր կարող)։

Վարդան Բարձրաբերդցի[4].— Գրում է Մեծրոպ Իշխանուհու գործունեության մասին Վրկանում և Հայաստանում, չնայած դնում է Հայերի ու Հայաստանի համար նրա կատարած գործերի վրա։

Այս խորագրությունների ավելի կատարյալ ձևն է Յարությունյանում հոկտեմբերի 26-ի առակ գտնված փարքը։ Այստեղ գրվատվում է Մեծրոպ Իշխանուհու անձնավորությունը և նրա բազմաթիվ հոգեմանակները, Վրկանում կատարած բարեգործությունները և ապա հիշատակվում է, որ Մեծրոպ Իշխանուհուն չարաբասել էին Խոսրովի մոտ, և արքան գցել էր նրան գպանների առաջ՝ հոչակելու, որից փառավոր հոգեմանակով դուրս է գալիս Մեծրոպը և նորից մեծարվում Խոսրովի կողմից։

Վերոհիշյալ բոլոր հեղինակների մոտ նկատվում է մի բնորոշանուշ գիծ, այն է՝ Սեբեոսյան նախնական աղբյուր խմբագրում և կրճատում։

Մեծրոպի մասին պատմիչների հաղորդած տեղեկությունները կարելի է յուժանել երկու խմբի։

Առաջինը խոսում է Պարսկաստանում Մեծրոպի տարած հոգեմանակների մասին, ավելի շատ առանց տալով քրիստոնեության և հայ ժողովրդի համար նրա կատարած գործերին։ Իսկ երկրորդը տալիս է նրա կյանքի հիմնական գրվածները, չափազանց և ապավորելով դրանք։

Ի՞նչն է ավելի չափազանցության պատճառը։

Ինչպես հայտնի է, Սեբեոսի Պատմությանը ծանոթ էին պատմիչների

---

1 Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն, Թիֆլիս, 1912, էջ 69—73։
2 Սամուել Անեցի, Հաւաքումն ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1899 թ., էջ 76, 77։
3 Մխիթար Անեցի, Պատմութիւն, ՍՊԲ, 1879 թ., էջ 33—35։
4 Վարդան Բարձրաբերդցի, Պատմութիւն, Մոսկվա, 1861, էջ 84։

մեծ մասը, թերևս բացի Դրասխանակերցուց և Վարպան Բարձրաբերդցուց, որոնք այդ մասին պարզ հիշատակություն չունեն։ Սերեմն, չի կարելի նրանց մեղադրել, թե անտեղյակ են այդ պատմությանը։

Ճիշտությանն և ապացուցման սկզբունքորեն, համանման «Հայոց վարքն»-ում մեջբերված Ամրասի վարքագրությունն է, որից հետագայում օգտվել են Յաքոբաւորք կազմողները, և համաձայն որի իրենց Պատմությունները խմբագրել են նաև հետագա հեղինակները։ Այս չիշտության հիմնական կետը վարքագրությունն է, այդ պարզ է և չատ հասկանալի։

Ի-րդ դարի սկզբի նշանավոր գրագիրը, չնայած այն հանգամանքին, որ նահատակ չէր, ամենամենայնիվ սեղ է գտել սրբերի չարքում։ Այդ բանին նրան արժանացրել է եկեղեցին ի գիմաց այն բազմաթիվ ծառայությունների, որ նա կատարել է լուսավորչական եկեղեցու համար, բացի հոգևորականների անատակեսով նրա անձնավորության վրա կար մի բիծ՝ ապստամբություն քրեստոնյա Մարիկ կայսեր դեմ և սարսափելի վրեժ առնալ գաղտնի։ Հարկավոր էր սրեկ կերպ այդ բանը ծածկել ու կոծկել։ Հնարավոր չէր նրա կենսագրությունից դուրս նետել այդպիսի մի մեծ վառում, ուստի ամենի հարմար էր ապստամբությունը դարձնել պարսից արքայի դեմ, և որպեսզի հակասություն չառաջանա, թե ինչպես անվանի և սիրելի գործիչը պատասխանատու է մահվան և ապա նրանից մեծարվում արքայից արքայի կողմից, գոնեվեց տեղա առնասարդ՝ այն վերագրել չարաբաստության, հավանաբար աչքի առաջ ունենալով միջնադարում գոյություն ունեցող բազմաթիվ նման դեպքեր։

Հնարավոր գոյություն ունեցող այս ապավորումների և կրճատումների պատմիչները գտանների հետ մենամարտող Ամրասին և պարսից գրագիրին չեն ասորիերում իրարից և անգամ կասկածի էլ չեն ենթարկում նրա մեղանչական անձ լինելը։

Առաջին անգամ նման կասկածի մենք հանդիպում ենք Զամչյանի «Հայոց պատմության» մեջ։ Վերջինս իր Պատմության մեջ Ամրասի Բարձրաբերդցու ժառանգությունը գրում է, բայց Հովհ. Դրասխանակերցու, Ասողիկի, Վարպան Բարձրաբերդցու տվյալների, յայնարեն օգտագործելով նաև բյուզանդական աղբյուրները, ապա կցում է մի հատուկ ծանոթագրություն «Այլ գիտելի է զի գայսմ Ամրասայ խառն և անհեթեթ բանք գրին յանծանոթ պատմութիւնս ինչ... այն թէ ի չարաբաստեալ գնմանէ թշնամեաց՝ արձակեաց ի վերայ նորա թուրսի գլուխս... և այլեւ աւելորդ բանք։ Եւ ասասի ասեալ ամենայն մուծեալ են յօրինակս գրոց Սամուէլի Երիցու. ինչ ինչ սր ոչ գոյ ի հին ձեռագրի, որոց և անհաստատութիւնն յայտնի լինի ի սասրդ բանից Յովհաննու կաթուղիկոսի և այլոց»։

Ինչպես տեսնում ենք, Զամչյանը մի քիչ ավելի առաջ է գնում և չարաբաստության փաստը պարզապես վերագրում է պատմությանն անտեղյակ լինելուն։ Զամչյանը ծանոթ չլինելով Սերեսոի Պատմությանը, չէր կարող

---

1 Անտարակույս է նշել, որ Պարսկաստանում մահապատժի բազմաթիվ դաժան ձևերի կողքին բոլորովին անծանոթ էր գազանների հետ մենամարտելը, մինչդեռ դա սովորական երևույթ էր Իրանդիայում։

2 Զամչեան, Պատմութիւն Հայոց, գիրք Բ, էջ 325։

3 Նույն տեղ, ծանոթ., էջ 325։

փաստերը ճշտել, ուստի ապճառումները և արտաքոց հակասությունները պարզապես անգիտության է վերագրում։

Սմբատ Բագրատունու կյանքի ժամանակագրությունը պարզելու համար Սեբեոսի Պատմությունը պետք է ընդունել որպես ամենահավատի աղբյուր, նրանից դատելով որոշ հերքումներ։

Վերոհիշյալ հեղինակն իր Պատմության մեջ կասկածների ոչ մի տեղիք չի տալիս, այլ ուղղակի սկզբում ներկայացնելով այդ անձնավորությունն իբրև Մանվելի որդի Սմբատ Բագրատունի, շարունակում է հետևյալ պրոլեմները խոսել որպես իրեն լավ ծանոթ անձնավորության մասին։ Սեբեոսին ժեղագրել անաչդակությունն՝ չվերհուությունն մեջ՝ տեղիք չտանք, որովհետև նա լինելով Բագրատունյաց եպիսկոպոս և տոհմի պատմագրան, ամենից ավելի էր ծանոթ տոհմի պատմությանը։ Եթե նկատենք Սմբատները տարբեր անձնավորություններ լինեին, նա, անկասկած, կնշեր։

Հայոց պատմության մեջ հաճախ կարելի է հանդիպել նման դեպքերի, երբ միևնույն անձնավորությունը որևէ զորավար կամ պետական գործիչ, Բյուզանդիայում մեծ պաշտոններ վարելուց և այս կամ այն պատճառով Պարսկաստանի գերիշխանության տակ անցնելուց հետո, բարձր պաշտոններ է ստանում և՛ այնտեղ, կամ հակառակը։ Օրինակ՝ Սմբատ Բագրատունու ժամանակակից մարզպան Դավիթ Սահառունին հետապատում պարձավ բյուզանդական կյուրոպատա։ Սա մի երևույթ է, որը բխում է թե՛ այդ երկու պետությունների և թե՛ Հայաստանի ու հայերի շահերից։ Բնորոշ է այն, որ նման դեպքերն ու դեմքերը հետապատում պատմության մեջ մեծ մասամբ աղավաղվել են, կամ շատ ավելի հաճախ բաժանվել են երկու անձնավորության։ Նույնպիսի բախտի է արժանացել, բացի Սմբատ Բագրատունուց, նաև Դավիթ Սահառունին։

Ինչ վերաբերում է Սալիասյանի վերոհիշյալ ծանոթագրության մեջ բերված այն պատճառաբանությանը, թե Սմբատ Բագրատունուն հայ պատմիչները չարունակ անվանում են «Բագմայպի» տիտղոսով, իսկ Սեբեոսը մեծարում է «Խոսրով-Շուշ» կոչումով, կարելի է ասել, որ մեր հայտնի պատմիչներից և ոչ մեկը «Բագմայպի» տիտղոս չի տալիս և ոչ մի Սմբատ Բագրատունու։ Այդ կոչմանն առաջին անգամ մենք հանդիպում ենք Զամչյանի «Հայոց պատմության» մեջ։ Նա հավանաբար վերցրել է այդ որևէ անհայտ աղբյուրից։

Ինչ վերաբերում է Սեբեոսին, նա Սմբատ Բագրատունուն Խոսրով-Շուշ տիտղոսով մեծարում է այն ժամանակից, երբ այդ չնորհում է նրան Պարսից արքան։ Իրանից առաջ նրան անվանում է նախ՝ Մանվելի որդի, ապա, ուղղակի՝ Սմբատ Բագրատունի. Վրկանի մարզպան նշանակվելուց հետո նրան՝ «Մարզպան Վրկանի»։

Այսպիսով, փաստերն ապացուցում են, որ 6-րդ դարի վերջին և 7-րդի սկզբին Բյուզանդական Հայաստանում և ապա Պարսկաստանում գործող Սմբատ Բագրատունին միևնույն անձնավորությունն է։

---

1 Տես *Ի. Օրբելի*, Багаванская надпись 639 г. („Христианский Восток", т. II, вып. 1).